

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2014-6-1-Ա

ք. Երևան

22.10.2014թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2014 թվականի հոկտեմբերի 22-ի նիստում քննարկեց 2014 թվականի հուլիսի 30-ին արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ ՓիՓիՋի Արքիթեքչուրլլ Ֆինիշիզ, Ինք. (այսուհետ՝ բողոքարկող) ընկերության (One PPG Place, City of Pittsburgh, State of Pennsylvania 15272, United States of America US) «LIQUID NAILS» (հայտ №20131404) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 90-րդ կետի 3-րդ, 4-րդ ենթակետերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նշում է ապրանքի տեսակը և համընդհանուր է դարձել խոսակցական կամ առևտրային պրակտիկայում: Տվյալ դեպքում «liquid nails»-ը (անգլերենից թարգմանաբար նշանակում է հեղուկ մեխ), հանդիսանում է սոսնձի տեսակ, որը կիրառվում է որպես անհարթ մակերեսներով ծանր նյութեր իրար ամրացնող միջոց (տես՝ <http://www.germ.ru/obj/0/9/0/>): Նշված կայքում կա հեղուկ մեխերի աղյուսակ, ցանկ, որտեղ գրված է արտադրող ընկերության և կոնկրետ ապրանքի անվանումը, գինը (օրինակ՝ «Bison» ընկերության հեղուկ մեխեր՝ Montage kit high tack ունիվերսալ սուպեր արագ, Monatage kit պրեֆեսիոնալ, «Bosny» ընկերության՝ Super nail, «Dap» ընկերության՝ Beats the nail 2000heavy-duty projects construction adhesive և այլն), այսինքն՝ «հեղուկ մեխը» լայն կիրառության շնորհիվ ապրանքը բնորոշող կատեգորիա է դարձել (ինչպես և նշված է Ձեր կրկնական փորձաքննություն խնդրարկելու պատասխան-գրության մեջ) և կարող է օգտագործվել սոսնձի

արտադրությամբ զբաղվող շատ ընկերությունների կողմից: Վերոգրյալը հիմք է հանդիսանում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը մերժելու համար:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ մերժված նշանը օգտագործվում է մի շարք արտադրողների կողմից և լայն կիրառության արդյունքում դարձել է ապրանքը բնորոշող կատեգորիա:

Փորձաքննության բաժնի պետը պնդեց, որ որոշումն իրավաչափ է և ներկայացված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ «LIQUID NAILS» (հայտ N°20131404) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ**

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ